



Մ ՈՒՐՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



ՅԻԱՆԱԿԻ Չորրորդ Կիրակի

13 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(38.1-8)

Այն օրերուն եզեկիա թագաւոր հիւանդացաւ եւ մահուան անկողին ինկաւ: Եսայի մարգարէն, Ամոսի որդին, անոր քով եկաւ եւ ըսաւ. «Տէրը այսպէս կ'ըսէ. - Քու տանդ համար կարգադրութիւն ըրէ՝ յաջորդդ նշանակելով, որովհետեւ կեանքիդ օրերը վերջացած են եւ մահդ մօտ է»:

Եզեկիա երեսը պատին դարձուց եւ այսպէս աղօթեց Տիրոջ. «Կ'աղաչեմ, ո՛վ Տէր, յիշէ թէ արդար եւ ուղղամիտ եղայ քու աչքիդ, եւ ըրի միայն այն ինչ որ հաճելի է քեզի»: Եւ Եզեկիա դառնօրէն լացաւ:

Այն ատեն Տէրը հրամայեց Եսայի մարգարէին, ըսելով. «Գնա՛ եւ Եզեկիային ըսէ. - Այսպէս կ'ըսէ Տէրը, քու հօրդ՝ Դաւիթի Աստուածը. «Լսեցի աղօթքդ, տեսայ արցունքդ եւ ահա քեզի տասնըհինգ տարի եւս կեանք կու տամ: Այլեւ Ասորեստանի թագաւորին ձեռքէն պիտի ազատեմ թէ՛ քեզ եւ թէ՛ այս քաղաքը, Երուսաղէմը, որ անձամբ պիտի պաշտպանեմ»: Եւ որպէսզի գիտնաս թէ Աստուած իր խոստումը պիտի կատարէ, Տէրը հետեւեալ նշանը կու տայ քեզի: Տե՛ս, քու հօրդ՝ Աքազի արեւու ժամացոյցին ստուերը տասներորդ աստիճանին վրայ ինկեր է հիմա. բայց Տէրը զայն տասը աստիճան

ետ պիտի դարձնէ»:

Եւ իրապէս, ստուերը իր ինկած տեղէն տասը աստիճան ետ գնաց:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ

ՆԱՄԱԿԷՆ

(1.1-14)

Անցեալին բազմաթիւ անգամներ Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ: Աստուած զինք ամէն բանի ժառանգորդ կարգեց եւ անոր միջոցաւ էր, որ տիեզերքը ստեղծեց: Որդին, Հօրը փառքին լոյսը եւ անոր էութեան ճշգրիտ պատկերը, որ իր խօսքին զօրութեամբ տիեզերքը կը պահէ, իր անձով մեր մեղքերը սրբելէ ետք՝ երկինքի մէջ նստաւ Աստուծոյ՝ Գերագոյն Զօրութեան աջ կողմը:

Ան շատ աւելի բարձր է հրեշտակներէն, ինչպէս Աստուծոյ իրեն տրուած անունը ցոյց կու տայ. որովհետեւ ո՞ր մէկ հրեշտակին երբեւիցէ Աստուած ըսաւ. «Դուն իմ որդիս ես, այսօ՛ր քեզ ծնայ»: Կամ որո՞ւ ըսաւ. «Ես անոր հայր պիտի ըլլամ եւ անիկա՝ ինձի որդի»: Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին աշխարհ կը զրկէր, ըսաւ. «Աստուծոյ բոլոր հրեշտակները թող պաշտեն զայն»:

Աստուած իր հրեշտակներուն մասին խօսած ատեն կ'ըսէ.

«Աստուած իր հրեշտակները ստեղծեց որպէս պատգամաւոր հոգիներ, եւ իր պաշտօնեաները՝ կրակի բոցի պէս»:

Մինչդեռ Որդիին կ'ըսէ.

«Քու աթոռդ, ո՛վ Աստուած, յաւիտեանական է. արդարութեամբ կ'իշխես թագաւորութեանդ վրայ: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա թէ ինչու, ո՛վ Աստուած, քու Աստուածդ ուրախութեան իւղով օծեց քեզ քու ընկերներէդ աւելի»:

Դարձեալ, ուրիշ տեղ մը Որդիին կ'ըսէ.

«Դուն, ո՛վ Տէր, սկիզբէն ստեղծեցիր երկիրը, եւ երկինքը քու ձեռագործդ է: Անոնք պիտի կորսուին. բայց դուն կաս եւ կը մնաս: Անոնք հագուստի պէս պիտի մաշին. վերարկուի մը պէս պիտի ծալես զանոնք եւ հագուստի պէս փոխես: Բայց դուն միշտ նոյնն ես եւ քու տարիներդ վերջ պիտի չունենան»:

Բայց հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբեք.

«Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

Չէ՞ որ հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը ղրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (17.1-10)

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Գայթակղութիւններ անպայման որ պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով

ուրիշներ գայթակղութեան մէջ կ'իյնան: Նախընտրելի պիտի ըլլար որ իր վզին ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը նետէին, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր: Հետեւաբար զգուշացէ՛ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ զինք, եւ եթէ զղջայ՝ ներէ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի գալով ըսէ՝ կը զղջամ, պէտք է ներես իրեն»:

Առաքեալները ըսին Տիրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»: Յիսուս ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, “արմատախի՛ղ եղի՛ր եւ ծովուն մէջ տնկուէ՛”, վստահ եղէք որ պիտի հնազանդի ձեզի»:

«Ենթադրենք որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. “Անմիջապէս գնա՛, ճաշդ կեր”»: Բնականաբար՝ ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. “Ընթրիքս պատրաստէ՛ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ ինծի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ. անկէ ետք կրնաս ուտել եւ խմել”»: Կը կարծէ՞ք որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կատարէք ի՛նչ որ հրամայուած է ձեզի, ըսէք. “Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք”»:

«Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, “արմատախի՛ղ եղի՛ր եւ ծովուն մէջ տնկուէ՛”, վստահ եղէք որ պիտի հնազանդի ձեզի»: